Հայտարարություն

Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 2 «Շուշան» մանկապարտեզ ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթներ հետևյալ մանկավարժական աշխատողների ընտրության համար.

1. Մեթոդիստ՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալ՝ 1 դրույքային միավոր
2. Դաստիարակ /երկարօրյա/՝ 0,36 դրույքային միավոր
3. Երաժշտության դաստիարակ՝ 1,5 դրույքային միավոր։

Մրցույթներն անցկացվելու են երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվելու է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի, իսկ հարցազրույցը՝ հաստատության կազմած հարցաշարով։ Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին։

Մեթոդիստի՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալի որակավորման պահանջներն են՝ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի աշխատանքի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ։

Դաստիարակի /երկարօրյա/ որակավորման պահանջներն են՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ։

Երաժշտության դաստիարակի որակավորման պահանջներն են՝

1) միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և երաժշտական կրթություն (երաժշտական կամ արվեստի դպրոց).

2) դպրոցահեն նախակրթարաններում նաև՝ «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին բավարարող անձը, որը տվյալ դպրոցում դասավանդում է «Երաժշտություն» առարկան։

Դիմող քաղաքացիները թիվ 2 «Շուշան» մանկապարտեզ ՀՈԱԿ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն (Ձև 4),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են 2026թ. սեպտեմբերի 4-ից հոկտեմբերի 1-ը ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 09:00-ից 17:00-ն:

Դաստիարակի /երկարօրյա/ թափուր պաշտոնների մրցույթը կկայանա 2026 թվականի հոկտեմբերի 7-ին ժամը 11:00-ին Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 2 «Շուշան» մանկապարտեզ ՀՈԱԿ -ում (հասցե՝ ք. Էջմիածին, Վազգեն Առաջին 68/1):

Մեթոդիստի՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալի մրցույթը կկայանա 2026 թվականի հոկտեմբերի 7-ին՝ ժամը 14:00-ին Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 2 «Շուշան» մանկապարտեզ ՀՈԱԿ -ում (հասցե՝ ք. Էջմիածին, Վազգեն Առաջին 68/1):

Երաժշտության դաստիարակի մրցույթը կկայանա 2026 թվականի հոկտեմբերի 6-ին ժամը 15:00-ին Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 2 «Շուշան» մանկապարտեզ ՀՈԱԿ -ում (հասցե՝ ք. Էջմիածին, Վազգեն Առաջին 68/1):

Տեղեկությունների համար զանգահարել 095646961 հեռախոսահամարով:

Հասցե՝ ք. Էջմիածին, Վազգեն Առաջին 68/1, էլ. հասցե՝ tiv2shushan@mail.ru: